ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2015 թվական № 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 186-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Գարեգին Սևունցի անվան Խնձորեսկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի մայիսի 18-ի գրավոր առաջարկությունը, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Խնձորեսկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը Գարեգին Սևունցի անունով անվանակոչելու և կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին>> N 186-Ա որոշման 2-րդ կետի 1) ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ <<Գարեգին Սևունցի անվան Խնձորեսկի միջնակարգ դպրոց>> բառերը փոխարինել <<Խնձորեսկի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոց>> բառերով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մայիսի 25
ք. Կապան